# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *ՈՐՈՇՈՒՄ*

*18 հունվարի 2024թվականի N 35*

### ԳՈՒՅՔԻՆ ԵՎ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՎՈՂ ՄԱՍԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 5-րդ, 7-րդ բաժինների պահանջներով և հիմք ընդունելով Ավագ Դանիելյանի 2023 թվականի դեկտեմբերի 27-ի դիմումը.

## *ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝*

1.Ռուսաստանի Դաշնության քաղաքացի Ավագ Դանիելյանին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 26122023-07-0126, գաղտնաբառ՝ PIKS8XAV4ABH) Հրազդան քաղաքի Մաքրավան թաղամասում գտնվող գույքին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Մաքրավան թաղամասի Հ. Աճառյան փողոց 4:

2. Ավագ Դանիելյանին սեփականության իրավունքով պատկանող Հրազդան քաղաքի Մաքրավան թաղամասի Հ. Աճառյան փողոց 4 հասցեում գտնվող գույքի 0.0737հա մակերեսով բաժանվող մասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Մաքրավան թաղամասի Հ. Աճառյան փողոց 4/1, 0.0239հա մակերեսով բաժանվող մասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Մաքրավան թաղամասի Հ. Աճառյան փողոց 4/2, իսկ 0.0883հա մակերեսով մասինը թողնել նույնը՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Մաքրավան թաղամասի Հ. Աճառյան փողոց 4:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

18 հունվարի 2024թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ու Մ*

*18 հունվարի 2024թվականի N 36*

### ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված N1 հավելվածի 6-րդ բաժնով, հիմք ընդունելով Հայկ Ստեփանյանի 2024 թվականի հունվարի 17-ի դիմումը.

*<u>Ո Ր Ո Շ Ու Մ  Ե Մ՝</u>*

1.Համաձայնեցնել կառուցապատող Հայկ Ստեփանյանի նախագծային փաստաթղթերը և տալ շինարարության թույլտվություն Հրազդան քաղաքի Հարավային թաղամասի Րաֆֆու փողոց 3-րդ նրբանցք 36 հասցեում գտնվող բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասում (անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայական N 01102021-07-0128, գաղտնաբառ՝ NLKHEPM15EFR) ավտոտեխսպասարկման կայանի և պարսպի կառուցման համար համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

18 հունվարի 2024թ.
ք.Հրազդան

Ձև N 2-3
ՀԱՎԵԼՎԱԾ
Հրազդան համայնքի ղեկավարի
2024թ.հունվար 18-ի N 36 որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ, ՀՐԱԶԴԱՆ

# ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

**N 3 18 հունվար 2024թ**

Տրված է կառուցապատող **ՀԱՅԿ ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ, ՀՀ, ԿՈՏԱՅՔ, ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔ, Գ. ՍՈՒԼԱԿ, 1 Փ. 4 ՆՐԲ. , 12 Տ**
(իրավաբանական անձի անվանումը, պետական գրանցման վկայականի համարը)

**Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, ք.Հրազդան, Հարավային թաղամասի Րաֆֆու փողոց 3-րդ նրբանցք 36** հասցեում
ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հասցեն, հողամասի գտնվելու վայրը)

**ավտոտեխսպասարկման կայան և պարիսպ, միջինից բարձր ռիսկայնության աստիճան՝ III կատեգորիա, 12.0x25.0մ հատակագծային չափերի միահարկ շինություն,** օբյեկտի
(օբյեկտի անվանումը, ռիսկայնության աստիճանը (կատեգորիան), հակիրճ բնութագիրը, հիմնական ցուցանիշները)

**կառուցման** շինարարական աշխատանքների կատարման, այդ թվում՝
(նոր կառուցման, վերակառուցման, վերականգնման, ուղեղջման և այլն)

կառուցապատվող հողամասի գլխավոր հատակագծի վրա նշված ոչ հիմնական կառույցների ____ տեղադրման համար:
(նշվում են ոչ հիմնական կառույցների անվանումները)

1.Օբյեկտի նախագծային փաստաթղթերը՝
1)մշակվել են **«ԷՅՋԻԹԻ ՓՐՈՋԵՔԹ» ՍՊԸ**
(նախագծային փաստաթղթերի փուլը, նախագծային աշխատանքների կապալառուի անվանումը,

**ՔՊԼ 17368,ճՐԴ-Ա-0107, ԿԱԴ-Ա1-009** կողմից,
լիցենզիայի համարը)

2)ստացել է (են) **30/06/2023** թ. N **1/120-23** փորձագիտական դրական եզրակացությունը (եզրակացությունները) ____
(նշել փորձաքննության տեսակը)

**<<ԱՐԽԻՏԵԿՏ>> ՍՊԸ 17384** կողմից
(նշել փորձաքննության մարմնի (մարմինների) անվանումը, լիցենզիայի համարը)

կամ նախագիծը թողարկող պատասխանատու կապալառուի երաշխավորագիրը՝ **թ. N**
(նշել նախագիծը թողարկող պատասխանատու կապալառուի երաշխավորության պայմանագրի համար)

3)սահմանված կարգով համաձայնեցվել են իրավասու մարմնի, օրենքով սահմանված այլ շահագրգիռ մարմինների **ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ , 18/01/2024 թ.** հետ:
(նշել մարմինների անվանումները և համաձայնեցման ժամկետները)

2.Շինարարական աշխատանքներն իրականացնել **18 հունվար 2024 - 18 հունվար 2026** ընթացքում:
(նշել շինարարության նորմատիվային տևողությունը)

ներառյալ ավարտական ակտի տրամադրման համար ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքի համար նախատեսվող ժամկետը:
2.1.Ապահովել օբյեկտի շահագործման թույլտվության ստացումը՝
[ ] ավարտական ակտի տրամադրումից մեկ ամսվա ընթացքում,
[ ] ավարտական ակտի տրամադրման օրը:
3.Շինարարության վարման մատյանը բաղկացած է էջից, կարված և դրոշմակնքված է կողմից:
4.Նախագծային փաստաթղթերը փոփոխվել են
(լրացվում է N 1 հավելվածի 108-րդ կետով նախատեսված դեպքերում)

_______________________________________________ կողմից
(նախագծային աշխատանքների կապալառուի անվանումը, լիցենզիայի համարը)

և սահմանված կարգով համաձայնեցվել իրավասու մարմնի _______________ և այլ
(նշել իրավասու մարմնի անվանումը)

շահագրգիռ մարմինների _______________________________ հետ:
(նշել օրենքով սահմանված համաձայնեցնող մարմինների անվանումները)

5.Հատուկ պայմաններ՝
1)Կառուցապատողը նախքան շինարարությունն սկսելը, ինչպես նաև դրա ընթացքում, պարտավոր է հասցվելիք վնասների փոխհատուցման համար համաձայնության գալ կառուցապատման հետևանքով վնասներ կրող սուբյեկտների հետ.
2)Շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետներում կառուցապատումը չավարտելու դեպքում գործում են N 1 հավելվածի 123-126-րդ կետերով սահմանված պահանջները.
3)(լրացվում է N 1 հավելվածի 84-րդ կետով սահմանված դեպքերում) սույն թույլտվությունը տրվել է սահմանված կարգով հաստատված «Նախագիծ» փուլի հիման վրա, որին հաջորդող «Աշխատանքային փաստաթղթեր» փուլը պետք է ապահովի հաստատված փուլով ընդունված լուծումները և աշխատանքների իրականացման հաջորդականությունը

_______________________________________________
(նշվում են նախապատրաստական, հողային, շինմոնտաժային աշխատանքները և այլ աշխատանքներ)

6.(լրացվում է N1 հավելվածի 13-րդ կետով սահմանված դեպքերում)
Հաշվի առնելով, որ կառուցվող օբյեկտի շինարարությունը հնարավոր չէ առանց գլխավոր հատակագծի վրա համարների տակ նշված շենքի (շենքերի) և կամ շինության

(շինությունների)_______________________________________ քանդման՝
(նշվում են ամբողջությամբ կամ մասամբ քանդման ենթակա օբյեկտները, դրանց հիմնական ցուցանիշները, ընդհանուր մակերեսը, հարկայնությունը, շինանյութերը և այլն)

սեփականատիրոջը (օգտագործողին) _______________________
(նշվում է պետական գրանցման վկայականի համարը)

տրված սույն թույլտվությունը նաև քանդման թույլտվություն է:
Օբյեկտի քանդման աշխատանքներն իրականացնել նախագծային փաստաթղթերով ամրագրված հաջորդականությամբ:

7.Այլ պայմաններ _______________________________________
(նշվում են իրավական ակտերով և (կամ) պայմանագրով նախատեսված այլ պայմանները)

8.Կառուցապատողը շինարարական (քանդման, ապամոնտաժման) աշխատանքները սկսելուց առնվազն 3 օր առաջ համաձայն N 5 հավելվածի N 2-5 ձևի տեղեկացնում է իրավասու մարմնին:
9.Թույլտվության հիման վրա ցանկացած շինարարական և զուգահեռ աշխատանք կարող է իրականացվել բացառապես Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, նախագծային փաստաթղթերին և նորմատիվ-տեխնիկական պահանջներին համապատասխան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԵՎԱԿ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*19 հունվարի 2024թվականի N 37*

## ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻ ՇԻՆԱՐԱՐՆԵՐԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 30/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԼՈՂԱՎԱԶԱՆԻ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՍՏԻՃԱՆԱՎԱՆԴԱԿՆԵՐԻ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՊԱՐՍՊԻ ԵՎ ԱՅԴ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՐԱՉԻԿ ԱՐՏԱՎԱԶԴԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ, 24- րդ կետերով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներով և հաշվի առնելով, որ նշված հողատարածքը չի դասվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի շարքին, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգով և հիմք ընդունելով Հրաչիկ Արտավազդի Գրիգորյանի /ծնված՝ 1952 թվականին, Հրազդան քաղաք Շինարարների փողոց 30 տան բնակիչ / 2024 թվականի հունվարի 10-ի դիմումը, Հրազդանի համայնքապետարանի <<Աղբյուրակ թաղամաս>> լիազոր ներկայացուցչի կողմից 2024 թվականի հունվարի 9-ին տրված տեղեկանքը, համապատասխան որակավորում ունեցող կազմակերպության կողմից չափագրված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագիծը, չափագրման տվյալների մուտքագրման 2023BSYVNT ծածկագիրը.

## <u>*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝*</u>

1.Վերականգնել Հրազդան քաղաքի Շինարարների փողոց թիվ 30/1 հասցեում Հրաչիկ Արտավազդի Գրիգորյանին պատկանող 400.0 քմ մակերեսով հողամասի և նրա վրա ինքնակամ կառուցված 606.47 քմ արտաքին մակերեսով բնակելի տան, ինքնակամ

կառուցված 33.94 քմ արտաքին մակերեսով լողավազանի, ինքնակամ կառուցված 0.96քմ և 12.60քմ մակերեսներով աստիճանավանդակների, ինքնակամ կառուցված 1.33 քմ մակերեսով պարսպի սեփականության իրավունքը:

2.Վերականգնել Հրազդան քաղաքի Շինարարների փողոց թիվ 30/1 հասցեում գտնվող Հրաչիկ Արտավազդի Գրիգորյանին պատկանող 400.0 քմ մակերեսով օրինական հողամասին կից ավել օգտագործվող սահմանազատված 300.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ Հրաչիկ Արտավազդի Գրիգորյանի սեփականության իրավունքը:

3. Ինքնակամ կառուցված բնակելի տունը, ինքնակամ կառուցված լողավազանը, ինքնակամ կառուցված աստիճանավանդակները, ինքնակամ կառուցված պարիսպը կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, օրինականացման համար նախատեսված վճարը չի գանձվում:

4.Հողամասի սահմանները որոշվում են ԱՁ Աշոտ Հակոբյանի կողմից չափագրված և Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:

5.Ինքնակամ կառուցված բնակելի տունը, ինքնակամ կառուցված լողավազանը, ինքնակամ կառուցված աստիճանավանդակները, ինքնակամ կառուցված պարիսպը և այդ հողամասին կից ավել օգտագործվող սահմանազատված հողամասը համապատասխանում են քաղաքաշինական նորմերին և վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը:

6. Հրաչիկ Արտավազդի Գրիգորյանին պատկանող պահպանման և սպասարկման համար առանձնացված հողամասով բնակելի տանը տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Հարավային թաղամասի Շինարարների փողոց թիվ 30/1:

7.Առաջարկել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի միավորված մարզերի ստորաբաժանմանը՝ գրանցել քաղաքացի Հրաչիկ Արտավազդի Գրիգորյանի սեփականության իրավունքներն ամրագրված հողամասի, բնակելի տան նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

8.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին:

9.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

19 հունվարի 2024թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ու Մ*

*19 հունվարի 2024թվականի N 38*

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԿԻՍԱԿԱՌՈՒՅՑ ՇԻՆՈՒԹՅԱՆ,
ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՆԱՍՆԱՇԵՆՔԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ, 24- րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի պահանջներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգով և հիմք ընդունելով Արտավազդ Վարազդատի Հովսեփյանի 2023 թվականի դեկտեմբերի 26-ի դիմումը, Հրազդանի քաղխորհրդի գործկոմի 1989 թվականի հունիսի 30-ի թիվ 8 որոշումը, համապատասխան որակավորում ունեցող կազմակերպության կողմից չափագրված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագիծը, չափագրման տվյալների մուտքագրման 2023M76QX ծածկագիրը.

## *<u>Ո Ր Ո Շ Ու Մ Ե Մ՝</u>*

1.Օրինական ճանաչել Արտավազդ Վարազդատի Հովսեփյանին պատկանող Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Հարավային թաղամասում գտնվող 600.0 քմ հողամասում, ինքնակամ կառուցված 117.23 քմ արտաքին մակերեսով կիսակառույց շինությունը, ինքնակամ կառուցված 48.9 քմ արտաքին մակերեսով անասնաշենքը:
2.Հողամասի սահմանները որոշվում են «ԳԵՈԼԵՆԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից չափագրված և Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:
3.Ինքնակամ կառուցված կիսակառույց շինությունը, ինքնակամ կառուցված անասնաշենքը կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, օրինականացման համար նախատեսված վճարները չեն գանձվում:
4.Արտավազդ Վարազդատի Հովսեփյանին պատկանող կիսակառույց շինությանը տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Հրազդան համայնք Հարավային թաղամասի Ա. Գորկու փողոց 2/1:

5.Ինքնակամ կառուցված կիսակառույց շինության, ինքնակամ կառուցված անասնաշենքի պահպանումը չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

6.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին:

7.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

19 հունվարի 2024թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*19 հունվարի 2024թվականի N 39*

ԱՎՏՈՏՆԱԿԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջներով և հիմք ընդունելով Սարգիս Բայյանի 2024 թվականի հունվարի 10-ի դիմումը.

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ   Ե Մ՝*

1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 68 շենքի թիվ 13 բնակարանի բնակիչ Սարգիս Բայյանին սեփականության իրավունքով պատկանող /սեփականության իրավունքի գրանցման վկայական 1690323, տրված՝ 2005 թվականի մարտի 21-ին/ Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամաս թիվ 68 շենքին հարող տարածք հասցեում գտնվող ավտոտնակին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս 68/8:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

19 հունվարի 2024թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*19 հունվարի 2024թվականի N 40*

ԱՎՏՈՏՆԱԿԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջներով և հիմք ընդունելով Լիանա Չիդիյանի 2024 թվականի հունվարի 10-ի դիմումը.

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝*

1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 68 շենքի թիվ 13 բնակարանի բնակիչ Լիանա Չիդիյանին սեփականության իրավունքով պատկանող /սեփականության իրավունքի գրանցման վկայական 1690326, տրված՝ 2005 թվականի մարտի 21-ին/ Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամաս 68 շենքին հարող տարածք հասցեում գտնվող ավտոտնակին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս 68/9:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

19 հունվարի 2024թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*19 հունվարի 2024թվականի N 41*

ԱՎՏՈՏՆԱԿԻ ՀԱՍՑԵՆ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ և 8-րդ բաժինների պահանջներով.

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝*

1.Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 31072012-07-0140/ Հրազդան քաղաքի Երևանյան փողոց 4-րդ շենքին հարող տարածք 9 հասցեում գտնվող ավտոտնակի հասցեն փոփոխել՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Հարավային թաղամաս 4/9 հասցեով:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

19 հունվարի 2024թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*19 հունվարի 2024թվականի N 42*

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ
ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշումով և հիմք ընդունելով Իշխան Շաբոյանի 2023 թվականի դեկտեմբերի 28-ի դիմումը.

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ   Ե Մ՝*

1.Իշխան Շաբոյանին Հրազդան համայնքի ղեկավարի 2021 թվականի հունիսի 15-իN 838 որոշմամբ տրված N 28 շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետը՝ ըստ օրացուցային գրաֆիկի երկարաձգել մինչև 2024 թվականի հունիսի 15-ը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

19 հունվարի 2024թ.
ք.Հրազդան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

---

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*19 հունվարի 2024թվականի N 43*

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 07-ի N 189-Ն որոշման հավելվածը.

*<u>Ո Ր Ո Շ ՈՒ Մ   Ե Մ՝</u>*

1.Տրամադրել թույլտվություններ՝ համաձայն հավելվածի.
1)օրենքով նախատեսված դեպքերում համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի և իրացման՝ 12 (տասներկու) հատ,
2)օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի՝ 8 (ութ) հատ,
3)սեղմված բնական գազի և հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի վաճառք՝ 1(մեկ) հատ,
4)հանրային սննդի կամակերպում և իրականացում՝ 3 (երեք) հատ,
5)ժամը 24-00-ից հետո աշխատանք՝ 1 (մեկ) հատ,
6)արտաքին գովազդի տեղադրում՝ 3 (երեք) հատ:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

19 հունվարի 2024թ.
ք.Հրազդան

Հավելված
Հրազդան համայնքի ղեկավարի
2024 թ. հունվար 19-ի
N 43 որոշման

# ՑՈՒՑԱԿ
# ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

| Հ/Հ | Իրավաբանական անձի անվանումը/անուն,ազգանուն/ կամ կազմակերպաիրավական տեսակը | Իրավաբանական հասցե | Գործունեության հասցե | Տեղական տուրքի տեսակը | Շինության տեսակը, մակերեսը՝ քառ/մ, գովազդի մակերեսը՝ քառ/մ | Թույլտվության տրամադրման ժամանակահատվածը |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Ա/Ձ «Սևակ Հովհաննիսյան» | Ք. Հրազդան, Կոճոռ թ-ս, տուն 43 | Ք. Հրազդան, Կոճոռ թ-ս, տուն 43 | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 2. | Ա/Ձ «Սևակ Հովհաննիսյան» | Ք. Հրազդան, Կոճոռ թ-ս, տուն 43 | Ք. Հրազդան, Կոճոռ թ-ս, տուն 43 | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 3. | Ա/Ձ «Դավիթ Խաչատրյան» | Ք. Հրազդան, Շահումյան փ., տուն 296/1 | Ք. Հրազդան, Շահումյան 196 | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 4. | Ա/Ձ «Դավիթ Խաչատրյան» | Ք. Հրազդան, Շահումյան փ., տուն 296/1 | Ք. Հրազդան, Շահումյան 196 | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 5. | Ա/Ձ «Սուսաննա Մուրադյան» | Ք. Հրազդան, Ջրառատ 98 | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս Զ. Անդրանիկի պ. 163 | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 100 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 6. | Ա/Ձ «Սուսաննա Մուրադյան» | Ք. Հրազդան, Ջրառատ 98 | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս Զ. Անդրանիկի պ. 163 | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 100 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 7. | «Սիթի» ՍՊԸ | Ք. Երևան, Օհանովի 15/1 | Ք. Հրազդան,, Զ. Անդրանիկի պ. 187 | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | 500 և ավելի քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 8. | «Սիթի» ՍՊԸ | Ք. Երևան, Օհանովի 15/1 | Ք. Հրազդան,, Ձ. Անդրա[illegible]ի պ. 187 | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | 500 և ավելի քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 9. | «Սիթի» ՍՊԸ | Ք. Երևան, Օհանովի 15/1 | Ք. Հրազդան,, Ձ. Անդրանիկի պ. 66 | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | 500 և ավելի քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 10. | «Սիթի» ՍՊԸ | Ք. Երևան, Օհանովի 15/1 | Ք. Հրազդան,, Ձ. Անդրանիկի պ. 66 | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | 500 և ավելի քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 11. | Ա/Ձ «Մարգարիտ Խաչատրյան» | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 311/11 | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 311շենք, 1-ին հարկ | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին կիսամյակի համար |
| 12. | Ա/Ձ «Մարգարիտ Խաչատրյան» | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 311/11 | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 311շենք, 1-ին հարկ | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին կիսամյակի համար |
| 13. | Ա/Ձ «Կամո Այվզյան» | Ք. Հրազդան, Կենտրոն թ-ս 29/39 | Ք. Հրազդան, Կենտրոն թ-ս 29 /2 | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին կիսամյակի համար |
| 14. | Ա/Ձ «Կամո Այվզյան» | Ք. Հրազդան, Կենտրոն թ-ս 29/39 | Ք. Հրազդան, Կենտրոն թ-ս 29 /2 | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին կիսամյակի համար |
| 15. | Ա/Ձ «Մուշեղ Գևորգյան» | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 91/33 | Ք. Հրազդան, Բաղրամյան թ-ս 9 թիվ 4 | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի տարվա համար |
| 16. | Ա/Ձ «Մուշեղ Գևորգյան» | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 91/33 | Ք. Հրազդան, Բաղրամյան թ-ս 9 թիվ 4 | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի տարվա համար |
| 17. | Ա/Ձ «Սուրիկ Խաչատրյան» | Ք. Հրազդան, Կենտրոն թ-ս 84/42 | Գ. Քաղսի 10փ., 6նրբ, տուն 11 | ոգելից և ալկոհոլային խմիչքների իրացում | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 18. | Ա/Ձ «Սուրիկ Խաչատրյան» | Ք. Հրազդան, Կենտրոն թ-ս 84/42 | Գ. Քաղսի 10փ., 6նրբ, տուն 11 | հանրային սննդի կազմակերպում և իրականացում | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 19. | Ա/Ձ «Ալիսա Մարտիրոսյան» | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 2/32 | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 3թիվ 2/2 | ոգելից և ալկոհոլային խմիչքների իրացում | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 20. | Ա/Ձ «Ալիսա Մարտիրոսյան» | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 2/32 | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 3թիվ 2/2 | հանրային սննդի կազմակերպում և իրականացում | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 21. | Ա/Ձ «Լուսինե Մանուկյան» | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 14/12 | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս Բաղրամյան 5-րդ փ, թիվ 4 | ոգելից և ալկոհոլային խմիչքների իրացում | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 22. | Ա/Ձ «Եպրաքսյա Մխիթարյան» | Ք. Աբովյան | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս Բաղրամյան 5-րդ փ, թիվ 2 | ոգելից և ալկոհոլային խմիչքների իրացում | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 23. | «Սիթի» ՍՊԸ | Ք. Երևան, Օհանովի 15/1 | Ք. Հրազդան,, Զ. Անդրանիկի պ. 66 | հանրային սննդի կազմակերպում և իրականացում | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 24. | Ա/Ձ «Ժենիկ Սեդրակյան» | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 84/6 | Ք. Հրազդան,, Զ. Անդրանիկի պ. 43 | արտաքին գովազդի տեղադրում | 10 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի հունվար ամսվա համար |
| 25. | Ա/Ձ «Ժենիկ Սեդրակյան» | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 84/6 | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 129 շենք հարող տարածք | արտաքին գովազդի տեղադրում | 2 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի հունվար ամսվա համար |
| 26. | Ա/Ձ «Եպրաքսյա Մխիթարյան» | Ք. Աբովյան | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս Բաղրամյան 5-րդ փ, թիվ 2 | արտաքին գովազդի տեղադրում | 2 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի հունվար ամսվա համար |
| 27. | «Հ.Ա.Շ. Բեսթ» ՍՊԸ | Ք. Հրազդան,, Զ. Անդրանիկի պ. 8 | Գ. Քաղսի 5թ.,թիվ 1 | սեղմված բնական գազի և հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի վաճառք | լցակայան, հիմնական շինություն | 2024 թվականի տարվա համար |
| 28. | «Հ.Ա.Շ. Բեսթ» ՍՊԸ | Ք. Հրազդան,, Զ. Անդրանիկի պ. 8 | Գ. Քաղսի 5թ.,թիվ 1 | ժամը 24-00-ից հետո աշխատելու | լցակայան, հիմնական շինություն | 2024 թվականի տարվա համար |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*19 հունվարի 2024թվականի N 44*

ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻ ՄՈՒՇ ԹԱՂԱՄԱՍԻ 23/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐԵՎԻԿ ԱԴԻԲԵԿԻ ԳԱԼՍՏՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ, 24- րդ կետերով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներով և հաշվի առնելով, որ նշված հողատարածքը չի դասվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի շարքին, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգով և հիմք ընդունելով Արևիկ Ադիբեկի Գալստյանի /ծնված՝ 1957 թվականի հուլիսի 21-ին, Հայաստանի Հանրապետություն, քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս 7 տնակի բնակչուհի/ լիազոր անձ՝ Կարեն Միքայելյանի 2024 թվականի հունվարի 10-ի դիմումը, Հրազդանի համայնքապետարանի <<Մարի>> համատիրության կառավարչի կողմից 2024 թվականի հունվարի 9-ին տրված տեղեկանքը, համապատասխան որակավորում ունեցող կազմակերպության կողմից չափագրված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագիծը, չափագրման տվյալների մուտքագրման 2023KTNLUJ ծածկագիրը.

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝*

1.Արևիկ Ադիբեկի Գալստյանին պատկանող 7 տնակին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Մուշ թաղամաս 23/2:
2.Վերականգնել Հրազդան քաղաքի Մուշ թաղամասի 23/2 հասցեում գտնվող Արևիկ Ադիբեկի Գալստյանին պատկանող 400.0քմ մակերեսով օրինական հողամասի և նրա

վրա կառուցված 123.24 քմ արտաքին մակերեսով բնակելի տան նկատմամբ սեփականության իրավունքը:

3. Հողամասի սահմանները որոշվում են <<ԳԵՈԼԵՆԴ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից չափագրված և Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:

4.Բնակելի տունը և հողամասը համապատասխանում է քաղաքաշինական նորմերին և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը:

5.Առաջարկել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի միավորված մարզերի ստորաբաժանմանը՝ գրանցել քաղաքացի Արևիկ Ադիբեկի Գալստյանին սեփականության իրավունքներն ամրագրված հողամասի, բնակելի տան նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

6.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին:

7.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

19 հունվարի 2024թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am


## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*19 հունվարի 2024թվականի N 45*

### ՄԻԱՎՈՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 5-րդ և 7-րդ բաժինների պահանջներով և հիմք ընդունելով Ժաննա Ստեփանյանի 2023 թվականի դեկտեմբերի 15-ի դիմումը.

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ   Ե Մ՝*

1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Երևանյան խճուղի թիվ 7 տան բնակիչ Ժաննա Ստեփանյանին սեփականության իրավունքով պատկանող /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականներ N 19092022-07-0007, գաղտնաբառ՝ NRNGDWQQVLCL և N 28062023-07-0013, գաղտնաբառ՝ HJCKX8FMMSN/ Հրազդան քաղաքի Հարավային թաղամասի Երևանյան փողոց 58 և Հարավային թաղամասի Ա. Խանջյան փողոց 51/2 հասցեներում գտնվող հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Հարավային թաղամասի Ա. Խանջյան փողոց 51/2:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

19 հունվարի 2024թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am


## *ՈՐՈՇՈՒՄ*

*19 հունվարի 2024թվականի N 46*

### ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՌԵՎՏՐԻ, ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԵՎ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՇԵՆՔԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի պահանջներով, հիմք ընդունելով 2024 թվականի հունվարի 11-ին «ՀԱԲՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տրված տեխնիկական եզրակացությունը, «ԳԵՈԼԵՆԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից չափագրված շինության հատակագիծը, չափագրման տվյալների մուտքագրման 20225F299M ծածկագիրը և Վարուժան Զոհրաբյանի 2023 թվականի դեկտեմբերի 14-ի դիմումը.

## *ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝*

1.Օրինական ճանաչել Հրազդան քաղաքի Կոճոռ թաղամասի թիվ 94 տան բնակիչ Վարուժան Թելմանի Զոհրաբյանի կողմից Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամաս 30/21 հասցեում գտնվող սեփականության իրավունքով իրեն պատկանող /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 03022021-07-0007, գաղտնաբառ՝ 11TAGXJTY5LW/ բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված 113.92քմ արտաքին մակերեսով առևտրի, հանրային սննդի և կենցաղային սպասարկման շենքի՝ օրինականացման վճարը սահմանել 527 700 (հինգ հարյուր քսանյոթ հազար յոթ հարյուր) դրամ և վճարել Հրազդան համայնքի բյուջեի 900125001504 գանձապետական հաշվին:

2.Կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու

կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
3.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին:
4.Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:
5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

19 հունվարի 2024թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*19 հունվարի 2024թվականի N 47*

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ԽՈՐԴԱՆՈՑԻ, ՀԱՐԹԱԿԻ, ՊԱՐՍՊԻ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՑՎԱԾ ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐԻ ՈՒ ԴՌՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի պահանջներով, հիմք ընդունելով 2023 թվականի սեպտեմբերի 8-ին «ՀԱԲՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տրված տեխնիկական եզրակացությունը, ԱՁ Աշոտ Հակոբյանի կողմից չափագրված շինությունների հատակագիծը, չափագրման տվյալների մուտքագրման 2023BGH3G4 ծածկագիրը և Արայիկ Գևորգյանի 2023 թվականի սեպտեմբերի 8-ի դիմումը.

*<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝</u>*

1.Օրինական ճանաչել Հրազդան քաղաքի Վանատուր թաղամասի թիվ 521 տան բնակիչ Արայիկ Գևորգի Գևորգյանի կողմից Հրազդան քաղաքի Վանատուր թաղամաս 521 հասցեում գտնվող սեփականության իրավունքով իրեն պատկանող (սեփականության իրավունքի գրանցման վկայական 2625600, տրված՝ 2011 թվականի հունվարի 21-ին) բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված հետևյալ շինությունները.

1) 21.73քմ արտաքին մակերեսով բնակելի տունը ՝ օրինականացման վճարը սահմանել 42 800 ( քառասուներկու հազար ութ հարյուր) դրամ,
2) 9.23քմ արտաքին մակերեսով խորդանոցը՝ օրինականացման վճարը սահմանել 18 200 (տասնութ հազար երկու հարյուր) դրամ,
3) 4.81քմ մակերեսով հարթակը՝ օրինականացման վճարը սահմանել 9 500 (ինը հազար հինգ հարյուր) դրամ,
4) 10.36քմ մակերեսով պարիսպը՝ օրինականացման վճարը սահմանել 20 400 (քսան հազար չորս հարյուր) դրամ,

5) ինքնակամ բացված երկու պատուհանները՝ օրինականացման վճարը սահմանել 4000 (չորս հազար) դրամ,
6) ինքնակամ բացված չորս դռները՝ օրինականացման վճարը սահմանել 8 000 (ութ հազար) դրամ և վճարել Հրազդան համայնքի բյուջեի 900125001504 գանձապետական հաշվին:
2.Կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
3.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին:
4.Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:
5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

19 հունվարի 2024թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ու Մ*

*22 հունվարի 2024թվականի N 48*

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅԱՆ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅԱՆ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ, 24- րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի պահանջներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգով և հիմք ընդունելով Հովհաննես Պարգևի Մարգարյանի 2024 թվականի հունվարի 15-ի դիմումը, <<Կոտայքի մարզ>> նոտարական տարածքի նոտարի կողմից 2023 թվականի հունվարի 17-ին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը՝ գրանցված սեղանամատյան թիվ 78, ժառանգական գործ թիվ 02, 1986 թվականի նոյեմբերի 24-ի անհատական բնակելի տան տեխնիկական անձնագիրը, համապատասխան որակավորում ունեցող կազմակերպության կողմից չափագրված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագիծը, չափագրման տվյալների մուտքագրման 2023R5ZXCH ծածկագիրը.

## *<u>Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝</u>*

1.Օրինական ճանաչել Հովհաննես Պարգևի Մարգարյանին պատկանող Հրազդան քաղաքի Հարավային թաղամասում գտնվող 378.4 քմ հողամասում ինքնակամ կառուցված 140.78 քմ արտաքին մակերեսով բնակելի տունը, ինքնակամ կառուցված 30.39 քմ արտաքին մակերեսով ավտոտնակը, ինքնակամ կառուցված 40.93 քմ արտաքին մակերեսով տնտեսական շինությունը, ինքնակամ կառուցված 4.49 քմ արտաքին մակերեսով օժանդակ շինությունը:
2.Հողամասի սահմանները որոշվում են «ԳԵՈԼԵՆԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից չափագրված և Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:

3.Ինքնակամ կառուցված բնակելի տունը, ինքնակամ կառուցված ավտոտնակը, ինքնակամ կառուցված տնտեսական շինությունը, ինքնակամ կառուցված օժանդակ շինությունը կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, օրինականացման համար նախատեսված վճարները չեն գանձվում:
4. Հովհաննես Պարգևի Մարգարյանին պատկանող Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Ավետիսյան նրբանցք 1 հասցեում գտնվող բնակելի տան հասցեն փոփոխել՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Հրազդան համայնք Հարավային թաղամասի Ս. Շահումյան փողոց 109/2:
5.Ինքնակամ կառուցված բնակելի տան, ինքնակամ կառուցված ավտոտնակի, ինքնակամ կառուցված տնտեսական շինության, ինքնակամ կառուցված օժանդակ շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
6.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին:
7.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

22 հունվարի 2024թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*22 հունվարի 2024թվականի N 49*

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 07-ի N 189-Ն որոշման հավելվածը.

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝*

1.Տրամադրել թույլտվություններ՝ համաձայն հավելվածի.
1)օրենքով նախատեսված դեպքերում համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի և իրացման՝ 14 (տասնչորս) հատ,
2)օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի՝ 13 (տասներեք) հատ,
3)թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի վաճառք՝ 2 (երկու) հատ,
4)հանրային սննդի կազմակերպում և իրականացում՝ 2 (երկու) հատ,
5)արտաքին գովազդի տեղադրում՝ 2 (երկու) հատ:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

22 հունվարի 2024թ.
ք.Հրազդան

Հավելված
Հրազդան համայնքի ղեկավարի
2024 թ. հունվար 22-ի
N 49 որոշման

# ՑՈՒՑԱԿ
# ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

| Հ/Հ | Իրավաբանակն անձի անվանումը/անուն,ազգանուն/ կամ կազմակերպաիրավական տեսակը | Իրավաբանական հասցե | Գործունեության հասցե | Տեղական տուրքի տեսակը | Շինության տեսակը, մակերեսը՝ քառ/մ, գովազդի մակերեսը՝ քառ/մ | Թույլտվության տրամադրման ժամանակահատվածը |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Ա/Ձ «Կարինե Օհանյան» | Ք. Հրազդան, Մուշ թ-ս, տուն 7/1 | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս,շուկային հարող տարածք | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 2. | Ա/Ձ «Կարինե Օհանյան» | Ք. Հրազդան, Մուշ թ-ս, տուն 7/1 | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս,շուկային հարող տարածք | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 3. | «Սոլակկաեմ» ՍՊԸ | Գ. Սոլակ, 10 թղմ, տ.31 | Գ. Սոլակ,8 թղմ, թիվ 3 խանութ | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 100 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 4. | «Սոլակկաեմ» ՍՊԸ | Գ. Սոլակ, 10 թղմ, տ.31 | Գ. Սոլակ,8 թղմ, թիվ 3 խանութ | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 100 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 5. | Ա/Ձ «Հասմիկ Հովհաննիսյան» | Գ. Սոլակ, 10 թղմ, տ. 26 | Գ. Սոլակ, 1-ին փ., 49/2 | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 100 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 6. | Ա/Ձ «Հասմիկ Հովհաննիսյան» | Գ. Սոլակ, 10 թղմ, տ. 26 | Գ. Սոլակ, 1-ին փ., 49/2 | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 100 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 7. | Ա/Ձ «Բուդենիկ Գաբրիելյան» | Ք. Հրազդան,Վանատուր 52 | Ք. Հրազդան,Վանատուր 52 | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 8. | Ա/Ձ «Բուդենիկ Գաբրիելյան» | Ք. Հրազդան,Վանատուր 52 | Ք. Հրազդան,Վանատուր 52 | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 9. | «Տիվա» ՍՊԸ | Ք. Հրազդան, Կենտրոն թ-ս Օգոստոսի 23/56 | Ք. Հրազդան, Կենտրոն թ-ս Օգոստոսի 23/56 | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 500 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 10. | «Տիվա» ՍՊԸ | Ք. Հրազդան, Կենտրոն թ-ս Օգոստոսի 23/56 | Ք. Հրազդան, Կենտրոն թ-ս Օգոստոսի 23/56 | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 500 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 11. | «Տիվա» ՍՊԸ | Ք. Հրազդան, Խեչոյան 18 | Ք. Հրազդան, Խեչոյան 18 | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 500 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 12. | «Տիվա» ՍՊԸ | Ք. Հրազդան, Խեչոյան 18 | Ք. Հրազդան, Խեչոյան 18 | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 500 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 13. | «Տիվա» ՍՊԸ | Ք. Հրազդան, Մ/շ թ-ս 5/29 | Ք. Հրազդան, Մ/շ թ-ս 5/29 | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 200 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 14. | «Տիվա» ՍՊԸ | Ք. Հրազդան, Մ/շ թ-ս 5/29 | Ք. Հրազդան, Մ/շ թ-ս 5/29 | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 200 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 15. | Ա/Ձ «Արմեն Եսայան» | Ք. Հրազդան, Սպանդարյան 36 | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս12-րդ դպրոցին հարող տարածք | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 16. | Ա/Ձ «Արմեն Եսայան» | Ք. Հրազդան, Սպանդարյան 36 | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս12-րդ դպրոցին հարող տարածք | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 17. | Ա/Ձ «Քրիստինե Թավրիզյան» | Ք. Հրազդան, Նոյեմբերյան փ., 16 Ա տուն | Ք. Հրազդան,Միկրոշրջան Դ-2 թ-ս շենք 68 հարող տարածք | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի երկրորդ, երրորդ և չորրորդ եռամսյակների համար |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 18. | Ա/Ձ «Քրիստինե Թավրիզյան» | Ք. Հրազդան, Նոյեմբերյան փ., 16 Ա տուն | Գ. Քաղսի 10փ., 6նրբ, տուն 11 | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի երկրորդ, երրորդ և չորրորդ եռամսյակների համար |
| 19. | Ա/Ձ «Մարիամ Մնացականյան» | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 110/38 | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 110 շենքին հարող տարածք | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի տարվա համար |
| 20. | Ա/Ձ «Մարիամ Մնացականյան» | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 110/38 | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 110 շենքին հարող տարածք | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի տարվա համար |
| 21. | Ա/Ձ «Ներսիկ Ղազարյան» | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 50/24 | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս շենք 88, 1-ին հարկ | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի տարվա համար |
| 22. | Ա/Ձ «Ներսիկ Ղազարյան» | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 50/24 | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս շենք 88, 1-ին հարկ | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի տարվա համար |
| 23. | Ա/Ձ «Հայկանուշ Զազյան» | Արզական , Բջնիի խճ. տուն 3 | Ք. Հրազդան,, Ձ. Կենտրոն թ-ս, Տիգրան Մեծի 9 | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին կիսամյակի համար |
| 24. | Ա/Ձ «Հայկանուշ Զազյան» | Արզական , Բջնիի խճ. տուն 3 | Ք. Հրազդան,, Ձ. Կենտրոն թ-ս, Տիգրան Մեծի 9 | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին կիսամյակի համար |
| 25. | Ա/Ձ «Նարինե Իսրայելյան» | Ք. Հրազդան,Վանատուր 310 | Ք. Հրազդան,Վանատուր 378 | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին կիսամյակի համար |
| 26. | Ա/Ձ «Նարինե Իսրայելյան» | Ք. Հրազդան,Վանատուր 310 | Ք. Հրազդան,Վանատուր 378 | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին կիսամյակի համար |
| 27. | Ա/Ձ «Նորայր Ավագյան» | Ք. Հրազդան,Չարենցի 9 | Ք. Հրազդան, Ձ. Անդրանիկի 6 | ոգելից և ալկոհոլային խմիչքների իրացում | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 28. | Ա/Ձ «Նորայր Ավագյան» | Ք. Հրազդան, Չարենցի 9 | Ք. Հրազդան, Ձ. Անդրա[illegible] 6 | հանրային սննդի կազմակերպում և իրականացում | մինչև 26 քառ/մ, [illegible]մնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 29. | Ա/Ձ «Քնարիկ Շխոյան» | Ք. Հրազդան, Ա. Խաչատրյան 25/1 | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս, 35 շենքին հարող տարածք | հանրային սննդի կազմակերպում և իրականացում | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 30. | Ա/Ձ «Կարեն Գրիգորյան» | Ք. Հրազդան,Միկրոշրջան թ-ս, 109/14 | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս,շուկային հարող տարածք | թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի վաճառք | հիմնական շինություն | 2024 թվականի տարվա համար |
| 31. | Ա/Ձ «Ժենյա Ղարիբյան» | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս, 128/18 | ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս, շենք 104, 1-ին հարկ | թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի վաճառք | հիմնական շինություն | 2024 թվականի տարվա համար |
| 32. | «Դավս Գրուպ » ՍՊԸ | Ք. Հրազդան, Ձ. Անդրանիկի 8/12 | Ք. Հրազդան, Ձ. Անդրանիկի 8/12 | արտաքին գովազդի տեղադրում | 5 քառ/մ | 2024 թվականի հունվար ամսվա համար |
| 33. | Ա/Ձ «Նորայր Ավագյան» | Ք. Հրազդան, Չարենցի 9 | Ք. Հրազդան, Ձ. Անդրանիկի 6 | արտաքին գովազդի տեղադրում | 2 քառ/մ | 2024 թվականի հունվար ամսվա համար |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*22 հունվարի 2024թվականի N 50*

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջներով և հիմք ընդունելով Գառնիկ Բարեղամյանի լիազորված անձ Արամայիս Պողոսյանի 2024 թվականի հունվարի 15-ի դիմումը.

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ   Ե Մ՝*

1.Ռուսաստանի Դաշնության քաղաքացի Գառնիկ Բարեղամյանին սեփականության իրավունքով պատկանող /սեփականության իրավունքի գրանցման վկայական 1776167, տրված՝ 2005 թվականի հուլիսի 22 -ին/ Հրազդան քաղաքի Երիտասարդական թաղամասում գտնվող հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Հարավային թաղամասի Մարշալ Բաղրամյան փողոց, 2-րդ նրբանցք 34/2:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

22 հունվարի 2024թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*22 հունվարի 2024թվականի N 51*

ԱՎՏՈՏՆԱԿԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջներով և հիմք ընդունելով Հայկ Կարապետյանի 2024 թվականի հունվարի 12-ի դիմումը.

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝*

1.Կոտայքի մարզի Ծաղկաձոր, Մեղրաձոր, 2-րդ փողոց թիվ 27 տան բնակիչ Հայկ Կարապետյանին սեփականության իրավունքով պատկանող /սեփականության իրավունքի գրանցման վկայական 2642009, տրված՝ 2009 թվականի մայիսի 5-ին/ Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամաս 237 շենքին հարող տարածք հասցեում գտնվող ավտոտնակին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս 237/4:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

22 հունվարի 2024թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*22 հունվարի 2024թվականի N 52*

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅԱՆ
ԵՎ ՊԱՐՍՊԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի պահանջներով, հիմք ընդունելով 2023 թվականի սեպտեմբերի 4-ին «ՀԱԲՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տրված տեխնիկական եզրակացությունը, ԱՁ Աշոտ Հակոբյանի կողմից չափագրված շինությունների հատակագիծը, չափագրման տվյալների մուտքագրման 2023JYHL3P ծածկագիրը և Կարեն Գրիգորյանի 2023 թվականի սեպտեմբերի 6-ի դիմումը.

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝*

1.Օրինական ճանաչել Հրազդան քաղաքի Շահումյան փողոց թիվ 103 տան բնակիչ Կարեն Ֆահրադի Գրիգորյանի կողմից Հրազդան քաղաքի Մաքրավան թաղամաս 103 հասցեում գտնվող սեփականության իրավունքով իրեն պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 19042022-07-0031, գաղտնաբառ՝ LMFRZB26IV1L) բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված 149.12քմ արտաքին մակերեսով տնտեսական շինությունը ՝ օրինականացման վճարը սահմանել 293 700 (երկու հարյուր իննսուներեք հազար յոթ հարյուր) դրամ, 3.88քմ մակերեսով պարիսպը ՝ օրինականացման վճարը սահմանել 7 700 (յոթ հազար յոթ հարյուր) դրամ և վճարել Հրազդան համայնքի բյուջեի 900125001504 գանձապետական հաշվին:
2.Կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ

պահանջելու իրավունք:

3.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին:

4.Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

22 հունվարի 2024թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

### *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*22 հունվարի 2024թվականի N 53*

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ
ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշումով և հիմք ընդունելով Նունե Մխոյանի լիազորված անձ Արմեն Թադևոսյանի 2023 թվականի դեկտեմբերի 28-ի դիմումը.

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝*

1.Նունե Մխոյանին 2023 թվականի ապրիլի 11-ին տրված N 20 շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետը՝ ավտոգազալիցքավորման ճնշակային կայանի նախագծի վերազինման, լրամշակման համար, ըստ օրացուցային գրաֆիկի երկարաձգել մինչև 2024 թվականի նոյեմբերի 1-ը:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

22 հունվարի 2024թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am


## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*23 հունվարի 2024թվականի N 54*

ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 252-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի օգոստոսի 3-ի N 920-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածով և հիմք ընդունելով Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Արշիլ Գորկի փողոցի 2-րդ նրբանցքի 10 տան բնակիչ Հրաչիկ Մխիթարյանի 2024թ. հունվարի 22-ի N 613 դիմումը.

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ   Ե Մ՝*

1. Հրազդանի համայնքապետարանի 900125001025 հաշվեհամարին որպես փոխադրամիջոցի համար գույքահարկ վճարված գումարից 53442 /հիսուներեք հազար չորս հարյուր քառասուներկու/ դրամը հետ վերադարձնել Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Արշիլ Գորկի փողոցի 2-րդ նրբանցքի 10 տան բնակիչ Հրաչիկ Մխիթարյանին՝ առաջացած գերավճարի չափով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

23 հունվարի 2024թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*23 հունվարի 2024թվականի N 55*

ԱՐՄԵՆ ԿԱՐԵՆԻ ՄԵԼՔՈՆՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 34-րդ հոդվածի հիմքով հարուցվել է վարչական վարույթ՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Հրազդանի բաժնում նախապատրաստված նյութերի հիման վրա: Ոստիկանության Հրազդանի բաժնի ՀՈԲ տեսուչ, ոստիկանության լեյտենանտ Ա. Գալեյանի կողմից կազմված արձանագրության ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասում շրջայց իրականացնելիս ոստիկանության Հրազդանի բաժնի աշխատակիցները հայտնաբերել են, որ Սևան քաղաքի Իսահակյան փողոցի 1 տան բնակիչ՝ Արմեն Կարենի Մելքոնյանը ոչ սահմանված վայրում իրականացնում է փողոցային առևտուր վաճառելով միրգ՝ ինչն առաջացնում է վարչական պատասխանատվություն՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 162-րդ հոդվածի հատկանիշներով այն է ոչ սահմանված տեղերում առևտուր իրականացնելը կամ ծառայություն մատուցելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթանասունապատիկից մինչև հարյուրապատիկի չափով:

Հարուցված վարչական վարույթի վերաբերյալ ծանուցված Արմեն Կարենի Մելքոնյանը չի ներկայացել վարչական վարույթի գործի քննությանը, ուստի ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 267-րդ հոդվածի 1-ին մասով գործը քննվել է վերջինիս բացակայությամբ: Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի քննության արդյունքում վարչական մարմինը, քննելով գործում առկա բոլոր փաստական հանգամանքները հաստատված է համարում, որ կատարվել է իրավախախտում, որի համար պատասխանատու է Արմեն Մելքոնյանը, սակայն թույլ տրված խախտումն ունի նվազ նշանակություն: Իրավախախտումը կրկնվելու դեպքում վարչական մարմինը ձեռնամուխ է լինելու վարչական ներգործության այլ միջոցներ կիրառելու:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 21-րդ հոդվածի համաձայն, այն է՝ եթե կատարված վարչական իրավախախտումը նվազ նշանակություն ունի, գործը վճռելու համար լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) կարող է խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 21-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ղեկավարին կից վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննող հանձնաժողովի 2024 թվականի հունվարի 23-ի N 1 արձանագրությունը.

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝*

1. Արմեն Կարենի Մելքոնյանին ազատել Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 162-րդ հոդվածով նախատեսված վարչական պատասխանատվությունից և հայտարարել բանավոր դիտողություն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արմեն Կարենի Մելքոնյանին պատշաճ կարգով իրազեկելու հաջորդ օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

23 հունվարի 2024թ.
ք.Հրազդան